# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 077 608-120, shnogh.lori@inbox.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՓԵՏՐՎԱՐԻ 2020 թվականի N 17-Ա

*ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 25-Ի ԹԻՎ 4 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածով՝ ***Շնող համայնքի ավագանին որոշում է՝***

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի ավագանու 2020 թվականի փետրվարի 25-ի թիվ 4 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը՝
1.1 «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի ավագանու՝ 25 փետրվարի 2020 թվականի թիվ 4 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին»
1.2. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի ղեկավարի հաշվետվությունը համայնքի 2019 թվականի տարեկան բյուջեի կատարման մասին»
1.3. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի ղեկավարի հաշվետվությունը 2018-2022 թթ համայնքի հնգամյա զարգացման ծրագրով նախատեսված և 2019 թվականին կատարված աշխատանքների մասին»
1.4 «Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին»:
1.5.« ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքի սեփականություն հանդիսացող Շնող համայնք,Շնող բնակավայր, փողոց 1, թիվ 7 հասցեում գտնվող գույքը և դրա զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասը անհատույց օգտագործման իրավունքով անժամկետ «Շնողի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին տրամադրելու մասին »

| Անուն, ազգանուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1. ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ | | | |
| 2. ԲԱՅՐԱՄՅԱՆ ԱՐՏԱԿ | | | |
| 3. ՂԱԶԱՐՅԱՆ ԶԱՎԵՆ | | | |
| 4. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՄՀԵՐ | | | |
| 5. ՈՒԼԻԽԱՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ | | | |
| 6. ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԿՐՏԻՉ | | | |
| 7. ՍԱՐԳՍՅԱՆ ՎԻԳԵՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 077 608-120, shnogh.lori@inbox.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՓԵՏՐՎԱՐԻ 2020 թվականի N 18-Ն

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով՝ ***Շնող համայնքի ավագանին որոշում է.***

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի ղեկավարի հաշվետվությունը Շնող համայնքի 2019 թվականի տարեկան բյուջեի կատարման մասին՝ համաձայն հավելվածի:

| Անուն, ազգանուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1. ԱՂԱՄՅԱՆ ԱՇՈՏ | | | |
| 2. ԲԱՅՐԱՄՅԱՆ ԱՐՏԱԿ | | | |
| 3. ՂԱԶԱՐՅԱՆ ԶԱՎԵՆ | | | |
| 4. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՄՀԵՐ | | | |
| 5. ՈՒԼԻԽԱՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ | | | |
| 6. ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԿՐՏԻՉ | | | |
| 7. ՍԱՐԳՍՅԱՆ ՎԻԳԵՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքի ավագանու
25 փետրվարի 2020 թվականի թիվ 18-Ն որոշման

## ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

| N | | ՊԼԱՆ | ՓԱՍՏԱՑԻ | % |
|---|---|---|---|---|
| 1 | ***ԸՆԴԱՄԵՆԸ*** | ***199487,8*** | ***199872,9*** | ***100,2*** |
| 2 | ՀՈՂԻ ՀԱՐԿ | 10779,8 | 10443,709 | 96,9 |
| 3 | ԳՈՒՅՔԱՀԱՐԿ ՓՈԽԱԴՐԱՄ. | 18172,3 | 17987,281 | 99,0 |
| 4 | ԳՈՒՅՔԱՀԱՐԿ ՇԻՆՈՒԹ. | 2252,0 | 671,176 | 29,8 |
| 5 | ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ | 590,0 | 535,0 | 90,7 |
| 6 | ՊԵՏ. ԴՐԱՄԱՇՆՈՐՀ | 74072,8 | 74072,8 | 100,0 |
| 7 | ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ | 45454,0 | 45450,4 | 100,0 |
| 8 | ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ | 3314,5 | 5482,5 | 165,4 |
| 9 | ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | 34987,4 | 35638,3 | 101,9 |
| 10 | ՈՉ ՊԵՏ. ԴՐԱՄԱՇՆՈՐՀ | 9865,0 | 9591,7 | 97,2 |

## ԾԱԽՍԵՐ

| N | | ՊԼԱՆ | ՓԱՍՏԱՑԻ | % |
|---|---|---|---|---|
| | ***ԸՆԴՀԱՆՈՒՐ*** | *253476,2* | *232227,6* | 91,6 |
| 1 | ՕՐԵՆՍԴԻՐ և ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆ | 57699,0 | 53707,1 | 93,1 |
| 2 | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐ. ԾԱՌ. | 68477,7 | 57674,7 | 84,2 |
| 3 | (ճանապարհ, գյուղատնտեսություն) | 4480,0 | 3406,6 | 76,0 |
| 4 | ԱՂԲԱՀԱՆՈՒՄ | 7780,0 | 7780,0 | 100,0 |
| 5 | ԿԵՂՏԱՋՐԵՐԻ ՀԵՌԱՑՈՒՄ | 1257,0 | 1074,0 | 85,4 |
| 6 | ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ | 12200,0 | 11846,5 | 97,1 |
| 7 | ՓՈՂՈՑՆԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄ | 2100,0 | 955,3 | 45,5 |
| 8 | ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆ. ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌ. | 6080,0 | 6035,9 | 99,3 |
| 9 | ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ | 4400,0 | 4066,8 | 92,4 |
| 10 | ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՆԵՐ, ԱԿՈՒՄԲՆԵՐ | 9335,4 | 9335,4 | 100,0 |
| 11 | ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ | 3102,0 | 2341,2 | 75,5 |
| 12 | ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ | 45191,1 | 45191,1 | 100,0 |
| 13 | ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ | 400,0 | 250,0 | 62,5 |
| 14 | ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ | 26314,0 | 26213,1 | 99,6 |
| 15 | ՀԱՐԱԶԱՏԻՆ ԿՈՐՑՐԱԾ ԱՆՁԻՆՔ | 420,0 | 400,0 | 95,2 |
| 16 | ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐ ԵՎ ԶԱՎԱԿՆԵՐ | 350,0 | 350,0 | 100,0 |
| 17 | ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 1600,0 | 1600,0 | 100,0 |
| 18 | ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴ | 2290,0 | 0,0 | 0,0 |

ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 077 608-120, shnogh.lori@inbox.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ՓԵՏՐՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ Ն 19-Ն

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ 2018-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԵՎ 2019 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 82-րդ հոդվածի 7-րդ կետով ՝ ***Շնող համայնքի ավագանին որոշում է:***

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի ղեկավարի հաշվետվությունը 2018-2022 թվականների համայնքի հնգամյա զարգացման ծրագրով նախատեսված և 2019 թվականին կատարված աշխատանքների մասին՝ համաձայն հավելվածի:

| Անուն, ազգանուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1. ԱՂԱՄՅԱՆ ԱՇՈՏ | | | |
| 2. ԲԱՅՐԱՄՅԱՆ ԱՐՏԱԿ | | | |
| 3. ՂԱԶԱՐՅԱՆ ԶԱՎԵՆ | | | |
| 4. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՄՀԵՐ | | | |
| 5. ՈՒԼԻԽԱՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ | | | |
| 6. ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԿՐՏԻՉ | | | |
| 7. ՍԱՐԳՍՅԱՆ ՎԻԳԵՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

Հավելված
25 Շնող համայնքի ավագանու
փետրվարի 2020թվականի
թիվ 19-Ն որոշման

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## 2018-2022թթ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐՈՎ 2019ԹՎԱԿԱՆԻՆ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԵՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

**1. *Գյուղատնտեսական մթերքների արտադրողականության բարձրացման ուղղությամբ արդի ռազմավարական և բիզնես ծրագրերի ներդնում, ռիսկերի գնահատում, այգեգործության զարգացում***

Աշխատանքների կատարման համար
նախատեսվել է ընդհանուր
61,537,410 մլն ՀՀ դրամ

Հակակարկտային կայանների ձեռքբերում՝
14 մլն ՀՀ դրամ

Իրականացվել է.
Ձեռք է բերվել 5 հակակարկտային կայան՝ 11 մլն ընդհանուր արժեքով:

Խմելու ջրագծի արտաքին ցանցի վերանորոգում՝
11 717 410 ՀՀ դրամ /նախահաշվային գին

Իրականացվել է ամբողջությամբ՝
10 310 400 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով

2019 թ-ին Թեղուտ ՓԲԸ-ի ֆինանսավորմամբ իրականացվել է 15 հա «Այգեհիմնման աշխատանքներ» 35 820 000 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով:
Ծրագրի իրականացման համար նախատեսվել էր՝ 36 063 000 ՀՀ դրամ/

**2. Անասնապահության զարգացում**

Աշխատանքների կատարման համար նախատեսվել է ընդհանուր 4 մլն ՀՀ դրամ

Սպանդանոցի կառուցում

Չի իրականացվել

3.Պատշաճ սանիտարահիգիենիկ միջավայրի ապահովում, աղբահանության հիմնախնդրի լուծում

Աշխատանքների կատարման համար նախատեսվել է ընդհանուր 7 500 000 մլն ՀՀ դրամ

| Սանիտարական մաքրման աշխատանքներ 6 500 000 ՀՀ դրամ | Դպրոցին կից տարածքի կանաչապատում 1 մլն ՀՀ դրամ |
| --- | --- |
| Իրականացվել է ամբողջությամբ Շնող համայնքի տարածքում: | Նախատեսված աշխատանքները չեն իրականացվել, սակայն իրականացվել են սելավատարերի մաքրման աշխատանքներ՝ 1 մլն ՀՀ դրամ ընդհանուր արժեքով: |

4.Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում, փողոցային լուսավորության անցկացում /ներբոգրյալ աշխատանքների կատարումը հնգամյա զարգացման ծրագրով չի նախատեսվել, սակայն իրականացվել է/

2019 թվականի տարբեր ժամանակահատվածներում բետոնապատվել են Շնող բնակավայրի 11-րդ և 13- րդ փողոցները, բարեկարգվել է 15-րդ փողոցը և «Գոմերի ձոր» թաղամասի ճանապարհը: Շնողի համայնքապետարանի միջոցներով և «Թեղուտ» ՓԲԸ–ի աջակցությամբ բարեկարգվել է անանցանելի դարձած սարի ճանապարհը, որը կարևոր և էական դեր ունի համայնքի բնակիչների համար:/ /Աշխատանքների կատարման ընդհանուր արժեքը կազմել է՝ 3 019 360 ՀՀ դրամ /:

Շնող համայնքի Շնող բնակավայրի գլխավոր փողոցում ՎիվաՍել ՄՏՍ-ի ֆինանսավորմամբ անց է կացվել փողոցային լուսավորության համակարգ՝ 1,8 կմ երկարությամբ, տեղադրվել են 40 LED լույսեր: Աշխատանքների կատարման արժեքը կազմել է՝ **9 360 000 ՀՀ դրամ**, որից՝ **728,360 ՀՀ դրամը** տրամադրվել է համայնքի կողմից: Վերը նշված աշխատանքերի իրականացման համար «Թեղուտ» ԹԲ ընկերությունը տրամադրել է խողովակներ՝ 1 500 000 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով:

Քարկոփ բնակավայրում բարեկարգվել է 600 մետր երկարությամբ ճանապարհահատված:/Աշխատանքների կատարման արժեքը կազմել է՝ 880 000 ՀՀ դրամ:/

**5.Համայնքային ենթակայության ուսումնական և հասարակական հաստատություններ**

Աշխատանքների կատարումը հնգամյա զարգացման ծրագրով չի նախատեսվել, սակայն իրականացվել է:

Իրականացվել է Թեղուտի մանկապարտեզի կցակառույցի կառուցման աշխատանքներ. Նախահաշվային գինը կազմում է 13 010 350 ՀՀ դրամ:
Աշխատանքների կատարման արժեքը կազմել է՝ 8 388 000 ՀՀ դրամ:
Կատարվել են մանկապարտեզի արտաքին կոյուղագծի տեղափոխում /480 000 ՀՀ դրամ/ և ներքին հարդարման աշխատանքներ/ 654 000 ՀՀ դրամ/:

6.«Շնողի բժշկական ամբուլատորիա » ՀՈԱԿ-ի շենքի գազաֆիկացում,արդի սարքավորումներով վերազինում: Շնող համայնքի Չալեր թաղամասի, Թեղուտ և Քարկոփ բնակավայրերի գազաֆիկացում:

Շնողի բժշկական ամբուլատորիայի շենքը գազաֆիկացվել է / 376 376 ՀՀ դրամ /: Ներդրվել է լոկալ ջեռուցման համակարգ /1 553 664 ՀՀ դրամ/, Համայնքի միջոցներով ամբուլատորիայի շենքում կատարավել են ներքին հարդարման աշխատաքներ՝ 736 800 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով:

Համայնքի Չալեր թաղամասի, Թեղուտ և Քարկոփ բնակավայրերի գազաֆիկացում՝ 193 300 000 ՀՀ դրամ

Չի իրականացվել

## 7.Մշակութային կյանքի և սպորտի զարգացում

| | | |
|---|---|---|
| Մշակութային կյանքի և սպորտի զարգացվածություն և երիտասարդության համախմբվածություն | Երաժշտական , մարզական,սպորտային գույքի ձեռքբերում` | Մշակութային և սպորտային միջոցառումների կազմակերպում |

**Շնողի մշակույթի տանը** կառուցվել է սանհանգույց և կոյուղի: Վերանորոգվել է մշակույթի տան բեմը և հանդերձասրահը` 1 835 000 ՀՀ **դրամ** ընդհանուր արժեքով: Մի շարք ակտիվ երիտասարդների նախաձեռնությամբ Շնողի մշակույթի տանը բացվել է«Գրաբուն» ընթերցասրահը, որտեղ հաճախ կազմակերպվում են գրքի քննարկումներ: Շնողի մշակույթի տանը գործում է Արտ-մեդիա թվայնացման կենտրոնը:

Վերանորոգվել են Շնողի մանկական արվեստի դպրոցի դահլիճը և երկու դասասենյակները / 2 678 400 ՀՀ դրամ/: Հոլանդացի բարերարների աջակցությամբ արվեստի դպրոցի դահլիճի համար ձեռք է բերվել գույք և նոր վարագույրներ:

## 8. Բազմաճյուղ համագործակցության ստեղծում և զարգացում

Համագործակցության դինամիկ զարգացման արդյունքում փոխշահավետ հարաբերությունների ստեղծում

Իրականացվել է

## 9.Աշխատանքների կատարումը հնգամյա զարգացման ծրագրով չի նախատեսվել, սակայն իրականացվել է

9.1.Եվրոպական ստանդարտներին համապատասխան` Շնողի համայնքապետարանում կառուցվել է քաղաքացիների սպասարկման գրասենյակ` հագեցած նոր գույքով: / Ընդհանուր արժեքը` 9 591 720 ՀՀ դրամ/

9.2. Շնողի համայնքապետարանում ներդրվել է լոկալ ջեռուցման համակար` 2 049 000 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով:

9.3. Քարկոփ վարչական տարածքում վերանորոգվել է մեկ բազմաբնակարան շենքի տանիք` 6 480 000 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով:

Համայնքի ղեկավար` Դավիթ Ղումաշյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 077 608-120, shnogh.lori@inbox.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՓԵՏՐՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 20-Ա

## *ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

«Տեղական ինքնակառավարման մասին»ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին,համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 21-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 18-Ա որոշմանը համապատասխան,հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների,զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման,պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների,կերակրողին կորցրած ընտանիքների սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացություն(ներ)ը՝ ***Շնող համայնքի ավագանին որոշում է*** ..

1.Բավարարել ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում վճարել հատկացված գումարը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Անուն, ազգանուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1.ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ | | | |
| 2.ԲԱՅՐԱՄՅԱՆ ԱՐՏԱԿ | | | |
| 3.ՂԱԶԱՐՅԱՆ ԶԱՎԵՆ | | | |
| 4.ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՄՀԵՐ | | | |
| 5.ՈՒԼԻԽԱՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ | | | |
| 6.ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԿՐՏԻՉ | | | |
| 7.ՍԱՐԳՍՅԱՆ ՎԻԳԵՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքի ավագանու
25 փետրվարի 2020 թվականի թիվ 20 -Ա որոշման

Ֆինանսական օգնություն.

Ազարյան Սուսաննա — 20 000 ՀՀ դրամ
Աղաջանյան Գայանե - 20 000 ՀՀ դրամ
Փարսադանյան Ջինուշ - 35 000 ՀՀ դրամ
Մատինյան Անիկ - 35 000 ՀՀ դրամ
Վերա Մակարյան - 20 000 ՀՀ դրամ

Ուսման վարձ.

Ազարյան Ասպրամ Արթուրի՝ ԵՊՀ -100 000 ՀՀ դրամ
Մելիքսեթյան Սաթեն Միեր՝ ԵՊՀ - 50 000 ՀՀ դրամ

Աշխ. քարտուղար՝ Հեղինե Ճիճյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 077 606-120, shnogh.lori@inbox.ru

# Ո Ր Ո Շ Ու Մ

25 ՓԵՏՐՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 21-Ա

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔ, ՇՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐ ՓՈՂՈՑ 1,ԹԻՎ 7 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՈՒՅՔԸ ԵՎ ԴՐԱ ԶԲԱՂԵՑՐԱԾ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆԺԱՄԿԵՏ «ՇՆՈՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-ԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 21-րդ ենթակետով, ՀՀ «Հողային օրենսգրքի»45,46,47-րդ հոդվածներով և հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ***Շնող համայնքի ավագանին որոշում է.***

1.Թույլատրել Շնող համայնքի ղեկավարին՝ ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքի սեփականություն հանդիսացող Շնող համայնք,Շնող բնակավայր,փողոց 1,թիվ 7 հասցեում գտնվող (անշարժ գույքի բնկատմամբ իրավունքի պետական գրանցման N 03022017-06-0029 վկայական) 831 քմ գույքը (612,4քմ մանկապարտեզ,162 քմ խոհանոց, դահլիճ,10,3քմ պարիսպ, 16,6 քմ պարիսպ, 18,2 քմ պարիսպ, 11,5քմ ծածկ) և դրա զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ 0,18334 հա հողամասը անհատույց օգտագործման իրավունքով անժամկետ տրամադրել «Շնողի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին:
2.Հանձնարարել ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքի ղեկավարին՝ սահմանված ժամկետում կնքել անհատույց օգտագործման պայմանագիր:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

| Անուն, ազգանուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1.ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ | | | |
| 2.ԲԱՅՐԱՄՅԱՆ ԱՐՏԱԿ | | | |
| 3.ՂԱԶԱՐՅԱՆ ԶԱՎԵՆ | | | |
| 4.ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՄՀԵՐ | | | |
| 5.ՈՒԼԻԽԱՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ | | | |
| 6.ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԿՐՏԻՉ | | | |
| 7.ՍԱՐԳՍՅԱՆ ՎԻԳԵՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ